«Եթե արյուն է թափվում, յուրաքանչյուր մարդու համար այն պետք է ցավ լինի»

Մեր հատուկ թղթակից **Գայանե Աֆրիկյանը** *Տալլիննում հանդիպեց էստոնական հեռուստատեսության հրազեկման ծրագրերի տնօրեն Էնն Էնսմային։*

Հ.– *Ձեր վերաբերմունքը վերջերս Ղարաբաղի կապակցությամբ Պուգոյի արած հայտարարությանը։*

Պ.– Մեզ, մանավանդ մերձբալթյան դեպքերից հետո, քաջ հայտնի է Պուգոյի աշխատանքային ոճը։ Այնպես որ մենք շատ զգուշությամբ և քննադատորեն ենք վերաբերվում նրա բոլոր հայտարարություններին։ Մենք գիտենք, որ Ղարաբաղի մասին տեղեկությունները նույնպես կենտրոնի միջոցով են ստացվում։ Սակայն հնարավորություն չունենք մեր թղթակիցներին հաճախ այնտեղ ուղարկելու։ Չնայած վերջերս մեր թղթակիցներից մեկը եղավ այնտեղ, սակայն 2–3 օրը բավարար չէ լրիվ տեղեկություն ստանալու համար։

Հ.– *Ինչպե՞ս եք նայում այն ամենին, ինչ տեղի է ունենում Ղարաբաղում, քաղաքակիրթ աշխարհի աչքի առջև։*

Պ.– Իսկապես, եթե այն տեղի ունենար, ասենք, Աֆրիկայում, ապա հիմա կգումարվեին արտակարգ նիստեր, ժողովներ, համաժողովներ և այլն։ Օրինակ, վերցնենք Հարավսլավիան։ Չէ՞ որ այնտեղ, Ղարաբաղի համեմատությամբ, առանձնապես ահավոր բան չի կատարվում։ Սակայն բոլորը Հարավսլավիա են այցելում։ Այն համաշխարհային խնդիր է դարձել։ Բայց քանի որ Ղարաբաղը, այսպես ասած, ԽՍՀՄ-ում է, ապա Արևմուտքի որոշ շրջանակներ չեն ուզում դրանով այնքան էլ զբաղվել։ Նմանապես Մերձբալթիկայով։ Իսկ ինչ վերաբերում է կենտրոնի այն հայտարարությանը, թե այնտեղ հայ գրոհայիններ են, ինձ թվում է, որ եթե ես էլ իմ աչքերով տեսնեի այն ամենը, ինչ կատարվում է, երբ իմ աչքի առաջ բռնաբարեին 70-ամյա կնոջ, անպայման գրոհային կդառնայի։ Այդ ամենը բացարձակ տրամաբանական է։ Երբ իշխանությունները չեն կարող պաշտպանել ժողովրդին, ապա ինչ-որ մեկը պետք է պաշտպանի։ Նույնիսկ անհրաժեշտ է, որ լինեն գրոհայիններ։

Աշխարհը շատ դաժան է։ Երբ արյուն է թափվում, ապա յուրաքանչյուր ազնիվ մարդու համար այն պետք է ցավ լինի։

Տալլին, 12 հունիսի 1991